



Վազգեն Սարգսյան

Պարտքի գգացում

Առաջին անգամ եմ մասնակցելու նման համաժողովի: Եվ հրավերքն էլ, ճիշտն ասած, ինձ համար շատ էր անսպասելի: Իմ խորին համոզմամբ՝ գրող կոչվելու իրավունք ունեն բացառապես այն ընտրյալները, ովքեր, ասենք, «Միրհավի» մակարդակով թեկուզ մեկ գործ են գրել: Եվ հանկարծ ես, ֆիզկուլտուրայի գյուղական ուսուցիչս, համարվում եմ երիտասարդ հայ գրող և, նույնիսկ, հրավիրվում եմ համաժողովի... Չէ, անձնական թերարժեքության գգացումով չեմ տառապում: Քավ լիցի, եթե փորձ ես արել ծիկրակել գրականության՝ այդ սուրբ տաճարի դուռ-լուսամուտից, դա ինքնին արդեն մեծ համարձակություն է: Եվ քանի որ ծիկրակելու համար ոչ ոք ականջիցդ չի քաշել, ընդհակառակը, առայժմ գրկաբաց «Էստի համեցեք» են անում, ուրեմն՝ ուղղակի իրավունք չունես սևերես անելու քեզ վստահողներին: Հոռետեսությո՞ւն է: Չէ, մտահոգություն, որ էս գլխից ճիշտ հասկանաս բռնածղ գործի պատասխանատվությունն ու ծանրությունը: Համոզված եմ, իմ երիտասարդ գործընկերներից շատերին նույն խոհերն են այցելել ծաղկածորյան հանդիպումի նախօրեին: Տարօրինակ հուզմունքով եմ սպասում այդ հանդիպմանը: Իմաստությունն ասում է՝ ամեն թոշուն իր երամի հետ է թոշելու: Մեր այս հանդիպումն, ասես, թոհչից առաջ երամ կազմելու նման մի բան է: Ցանկանանք, ուրեմն, մեր նորակազմ երամին համերաշխություն և բարի թոհչք՝ գրականության սուրբ, կապույտ երկնքում:

ԳԹ, 1984, 21 հունվարի